

6.06.2015թ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ելույթը՝ Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջախի դիմավորման առիթով

Հարգելի հայրենակիցներ

Արդեն 6-րդ անգամ հայոց հայրենիքն ընդունում է Համահայկական խաղերի բազմահազար մասնակիցներին, ովքեր ոչ միայն իրենց ուժերը կչափեն ամենատարբեր մարզաձեւերում, այլ նաեւ մոտիկից կզգան հայրենի հողի ուժն ու քաղաքությունը, կապրեն բերկրանքի զգացողությամբ ու վառ տպավորություններով, կհաղորդվեն հայրենասիրությանը, համահայկական նպատակներին: Համահայկական խաղերի բովանդակությունն ու նշանակությունը մեզ մտովի տեղափոխում են հեռավոր դարեր, երբ մեր նախնիները նավասարդյան տոների շրջանակներում կազմակերպում էին նավասարդյան խաղեր՝ դրանք վերածելով ուժի ու գեղեցկության, քաջության ու հաղթանակի ձգտումների վառ հանդեսներ: Նավասարդյան խաղերն ու տոնախմբությունները, որոնց մասնակցում էին հայ բնակչության բոլոր խավերը՝ արքաներն ու սեպուհները, իշխաններն ու շինականները, դարեր շարունակ միավորում էին ազգը մեկ նպատակի, հավատի ու մշակույթի շուրջ:

1999 թվականից սկիզբ առած եւ շարունակվող Համահայկական խաղերն այսօր առավել հավակնոտ նպատակներ են դնում համայն հայության առջեւ՝ ազգահավաքման, հայոց պետականության շուրջ համախմբվելու, հայոց հայրենիքը վերակերտելու եւ հզորացնելու գերագույն նպատակներ: Այն, որ տարեցտարի Համահայկական խաղեր դառնում են ավելի ընդգրկուն, ավելի բազմաբովանդակ, խոսում է այն մասին, որ հեռու չէ համահայկական իղձերի իրականացման օրը, որ մենք գտել ենք հայ ժողովրդի միաբանության հաստատման ճանապարհներից մեկը:

Ազատատենչ ու ազատագրված Արցախը բոցավառած Համահայկական խաղերի ջախը, որ հիմա վառվում է Վարդենիսում ու փոխանցվում Հայաստանի այլ քաղաքներ, նոր շունչ ու ոգի է հաղորդելու մեր ձգտումներին ու նպատակներին, մեր պայծառ ապագան կերտելու վճռականությանը: Այս բոցավառվող ջախը անշուշտ ոչ միայն Համահայկական խաղերի ազդարարման ջախն է, այլ նաեւ՝ հայոց միացյալ հայրենիքի ազատագրման ջախը, որ իր հետեւից կտանի նոր սերունդներ:

Շնորհավորում եմ բոլորիս Համահայկական խաղերի բացման առթիվ, մաղթում խաղաղ երկինք, տոնական տրամադրություն, հաղթանակի սպասումներով ու բերկրանքով լի օրեր, մարզական ու անձնական նվաճումներ:

Բարի երթ դեպի Համահայկական 6-րդ խաղեր: